

դաշտը եկեղեցիով մը ծածկուած է. ուստի զանց չըննր կատարուած փոփոխութիւնը արձանագրելու: Ուրեմն առ նուազն, այս սրբավայրին կառուցումը կրնանք դնել 330 ին և 390 ին և նոյն իսկ Կիւրեղի լուսթեան պատճառաւ 347 ին և 390 ին:

Էթէրիայի Օրագրութիւնը մեծ առաւելութիւն ունի Գեթսեմանիի Ս. Տեղեաց գերը և իւրաքանչիւրին դիրքը հաստատելու սաղիմական արարողութեանց մէջ. ըստ նոյն Օրագրութեան, եկեղեցական թափօրը Ձիթենեաց լեռնէն իջնելով՝ կու գայ այն տեղը ուր Փրկիչը աղօթեց և տագնապեցաւ: Այս տեղ, կը ծանօթագրէ ուխտաւորուհին, թէ գեղեցիկ եկեղեցի մը կար, հոն կը կարգացուէին տեղւոյն յարմար աւետարանը՝ Փրկչին մասնութեան եւ կալանաւորութեան վերաբերութեամբ: Այս ընթերցուածներու պահուն արտասուողներու հեկեկանքը մինչև անգամ քաղաքէն կը լսուէր:

Իր մեծ գիծերուն մէջ այս է սկզբնական աւանդութիւնը ու Լմբռնման եկեղեցիին հիմնարկութեան մերձաւոր թուականը ու պատմութիւնը մինչև 614, որ ժամանակ պարսիկ հրոսակները երուսաղէմ արշաւելով առաջին անգամ աւերեցին քաղաքէն դուրս գտնուող Քրիստոսի Լմբռնման գեղեցիկ եկեղեցին:

2. Քրիստոսի Լմբռնման եկեղեցիին աւանդութիւնը.

614—1187

Լմբռնման եկեղեցին, Պարսիկներու արշաւանքին ժամանակ, ահարկու բոցերը լափեցին ու եկեղեցին դարերով մնաց մոխիրի տակ, որուն հետքերը երևան ելան 1920 ի պեղումներու առթիւ, ինչպէս յիշեցինք: 614 թուականին եկեղեցին կործանուելէ յետոյ, Խաչակիրներէ յառաջ վերաշինուած է Մողեստոսի ձևերով, չենք կրնար հաստատել ճշդօրէն և բացարձակ կերպով այ չենք կրնար հերքել. բայց եթէ ան վերականգնուած իսկ ըլլար Թ. դարուն, Հաքէմի հակաքրիստոնէական հարուածներուն տակ և կամ Խաչակիրներուն՝ Ս. Քաղաքի մերձեցման պահուն, ներքին տապնապներուն հետեանքով տպահովաբար քանդուած կրնայ ըլլալ: Լմբռնման եկեղեցիին քանդումէն վերջ անոր մասին քրիստոնէից աւանդական պարագաները պատմականօրէն տեղափոխուած կը տեսնուին: Ձիթենեաց լեռան ստորոտը կատարուած